# ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵՆԱՔ

Ս. Պետերբուրգի Հայ-ուսանողական ժողովը քանի մ'ամսէ ի վեր սկսած է փոքրիկ տետրակներ հրատարակել ի Ս. Պետերբուրգ ի Տպարանի Ի. Ն. Սկորոխոդովի, յընթերցումն մանկանց:

Ասոնց տիտղոսներն են հետեւեալք:

1. Ուրիշի Գերեզմանի վրայ Առանց արտասուքի են լաց լինում: Գինն է՝ 5 կոպ.:
2. Բուլղար Աւազակապետ: Գինն է՝ 5 կոպ.:
3. Ժաննա տ'Արք Գաղղիացի Ազատող: Գինն է՝ 5 կոպ.:
4. Ներա Տատիս պատմածը: Գինն է՝ 5 կոպ.:
5. Դոնչօ Բուլղար աւազակապետի պատմածը: Գինն է՝ 5 կոպ.:

Այս հինգ տետրներն՝ որոնց փոքրագոյնը 20 երեսէ բաղկացեալ է, իսկ մեծագոյնը 61, ընտիր թղթոյ վրայ են տպուած: Բաց ի Ժաննա տ'Արքէն՝ որ Տաճկահայոց բարբառով է, միւս ամէնքն Ռուսահայոց բարբառով է: Բովանդակութիւնն է՝ համառօտ կրթիչ պատմութիւններ:

---

# ԲԱՌԱԳԻՐՔ

## ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

### ՏԵՏՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Գին՝ 2 ֆր. 75 սանդիմ:

ՎԻԵՆՆԱ, ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ. 1887.

Առաջիկայ Գերմաներէն-Հայերէն (աշխարհաբար) բառգիրքն 1884է ի վեր սկսած է հրատարակուիլ աշխատասիրութեամբ Հ. Աւետիք Վ. Կոյլաւեանի եւ այլ Մխիթարեան Միաբանից, եւ "կը բովանդակէ, ինչպէս Բառագրոց ճակատը դրուած է, բոլոր գործածական բառերը, գործնական կենաց՝ վաճառականութեան՝ ճարտարութեանց՝ արուեստից՝ բնական եւ մասնական գիտութեանց մէջ գործածուած բազմաթիւ բացատրութիւնք, նորաբանութիւնք եւ օտար բառեր, գործածական յատուկ անուանք, բայից խոնարհմունքն եւ անուանց հոլովմունքը, նոյնանշանք, եւ այլն, եւ այլն„: Գործոյս սկիզբը դրուած է գերմ. անուանց հո-

digitised by A.R.A.R.@

լոմման եւ բայից խոնարհմանց տախտակը կամ պատկերը: Տպագրութիւնն ընտիր թղթոյ վրայ է:

Մինչեւ ցայսօր հրատարակուած է 6 Տետր (960 երես). իւրաքանչիւր Տետրը բաղկացեալ է 10 թերթէ (160 երես): Ամբողջ գործն՝ որչափ կ'երեւայ, 9—10 տետրաւ պիտի լրանայ:

Որովհետեւ բաժանորդագրութիւնն արդէն փակուած է, հիմայ միայն տետր տետր կը ծախուի, իւրաքանչիւր տետրի գինն ըլլալով 2 ֆր. 75 սանդիմ: Ըստ այսմ մինչեւ ցարդ հրատարակուած տետրներն ի միասին կը ծախուին 16 ֆր. 55 սանդիմի = 8 րուբլի:

---

# ՑԱՆՁՆԵԼԻ ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Հայերէն Քերականութիւն, ի պէտս յառաջադէմ աշակերտաց. 516 էջ. Վիեննա, 1885: Գին՝ 2 ֆր:

Նոյն համառօտեալ, ի պէտս ստորին դասու աշակերտաց. 260 էջ. Վիեննա, 1886: Գին՝ 1 ֆր:

Երկու նոր երկասիրութեանցս վրայ տես Հանդիսիս 138 երեսը:

---

Ծաղիկ սուրբ Գրոց. Ընթերցուածք քաղեալ յԱստուածաշունչ Գրոց, ի պէտս դպրոցաց. 250 էջ. Վիեննա, Բ. տպգր. 1874. Գին՝ 2 ֆր. 25.

Ս. Գրոց մէջէն առնուած բարոյական խրատներ եւ ընտիր պատմութիւններ են, որոնց մէջ բովանդակուած ամէն բառերուն համառօտ բառգիրքը կցուած է գրքին վերջը՝ աշխարհաբար մեկնութեամբ:

Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց Նախնեաց, հանդերձ ծանօթութեամբք. 544 էջ. Վիեննա, 1866. Գին՝ 4 ֆր.

Ոսկի դարուն ամէնէն ընտիր մատենից գեղեցկագոյն կտորներն են, որոնց մէջի լեզուի բոլոր վայելչութիւնները բազմաթիւ ծանօթութիւններով եւ առատ օրինակներով կը բացատրուին, եւ դժուարիմաց տեղերը կը պարզաբանին: Գրոց սկիզբը նախաշաւիղ տեղեկութիւն կայ Մեսրոպեան լեզուին այլեւայլ կարգի գրուածոց եւ առանձինն սովորական մատենագրական լեզուին վրայ:

Քաղուածոյք ի թարգմանութեանց Նախնեաց, հանդերձ յոյն բնագրաւ. 493 էջ. Վիեննա, 1849. Գին՝ 3 ֆր.

Անոր Յառաջաբանին մէջ ալ նախընթացին նախաշաւղին նման տեղեկութիւն դրուած է:

digitised by A.R.A.R.@

# ՀԱՆԴԻՍԻ ԵՄՍՕՐԵԱՅ

## ՏԵՂԻՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՄԱՆ

| | |
|---|---|
| *Կ.ՊՈԼԻՍ,* | *Վանատուն Միաբանութեան:* |
| *„ „* | *Գրավաճառ Պօղոս եւ Յակոբ Աղայք:* |
| *ԶՄԻՒՌՆԻԱ,* | *Վանատուն Միաբանութեան:* |
| *ԿԱՐԻՆ,* | *Տ. Սերովբէ Վ. Քչուրեան:* |
| *ՏՐԱՊԻԶՈՆ,* | *Հ. Համազասպ Վ. Զամանեան:* |
| *ՊՐՈՒՍԱ,* | *Անտոն Էֆ. Թօփճեան:* |
| *ՏՓՂԻՍ,* | *Գրավաճառ Պր. Զաքարէ Գրիգորեանց:* |
| *ՊԱԹՈՒՄ,* | *Առաքել Էֆ. Սարուխանեան:* |
| *ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ,* | *Տ. Ղեւոնդ Քհ. Փափազեան:* |

*ՎԻԵՆՆԱ. ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ.*

digitised by A.R.A.R.@